

Կ Ա Ր Գ  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Տ Ն Տ Ե Ս Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն  
Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի  
Ա Ս Պ Ի Ր Ա Ն Տ ՈՒ Ր Ա Յ ՈՒ Մ ԵՎ Դ Ո Կ Տ Ո Ր Ա Ն Տ ՈՒ Ր Ա Յ ՈՒ Մ  
ՈՒ Ս ՈՒ Ց Մ Ա Ն

Ասպիրանտուրան, դոկտորանտուրան և հայցորդությունը հետբուհական կրթական համակարգում գիտամանկավարժական և գիտական բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձևեր են, որոնք իրականացվում են ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (այսուհետև՝ ԲՈՀ) «Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկին» համապատասխան մասնագիտություններով:

Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը սովորում է ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելու և կրեդիտային հենքով հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրով համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար:

Դոկտորանտը գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձ է, որն ընդունվել է դոկտորանտուրա՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու համար:

Հայցորդը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն՝ կրեդիտային հենքով հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրով համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար:

Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդների համակարգի ձևերով գիտական կադրեր պատրաստելու իրավունք ունեն այն բուհերն ու կազմակերպությունները, որոնք ունեն բարձր որակավորման գիտամանկավարժական և գիտական կադրեր, ժամանակակից գիտահետազոտական ու փորձարարական բազա, հեղինակավոր գիտական դպրոցներ, մասնակցում են հանրապետական և միջազգային գիտակրթական ծրագրերի, նախագծերի մշակմանն ու իրականացմանը:

Առկա ուսուցմամբ ասպիրանտուրա և դոկտորանտուրա ընդունված անձինք գիմվորական ծառայությունից ստանում են տարկետում՝ «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

## Ասպիրանտուրա

Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով՝ կրեդիտային համակարգով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարին:

Ասպիրանտուրա մրցութային կարգով ընդունվում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք բուհերի և կազմակերպությունների ասպիրանտուրա են ընդունվում վճարովի հիմունքներով՝ միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի, կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ:

Նախկինում ասպիրանտուրան ավարտած կամ ասպիրանտուրայից ազատված անձինք (անհարգելի պատճառով) չեն կարող պետական պատվերով կրկին ընդունվել ասպիրանտուրա:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը տրվում է համալսարանի ղեկավարի անունով, կցելով ներքոհիշյալ փաստաթղթերը.

ա) Բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

բ) Հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքի մասին հաշվետվությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ:

գ) Որակավորման քննությունների հանձնման մասին վկայական (եթե դրանք հանձնված են):

դ) Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3X4 չափսի):

ե) Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Ընդունվողն անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմը ներկայացնում է անձամբ:

Ասպիրանտուրա ընդունվողները հանձնում են քննություններ.

մասնագիտական առարկայից, օտար լեզվից (անգլերեն՝ «TOEEL» iBT, ֆրանսերեն՝ «on DaF» կամ գերմաներեն՝ «TCF») և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայից:

Ասպիրանտուրայում հեռակա վճարովի ուսուցումը տարեկան կազմում է 480000 դրամ:

## Դոկտորանտուրա

Դոկտորանտների պատրաստումն իրականացվում է առկա ուսուցման ձևով, որի ժամկետը չպետք է գերազանցի 3 տարին:

Դոկտորանտուրա ընդունվում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Դոկտորանտուրա ընդունվողները ներկայացնում են տվյալ բուհում կամ կազմակերպությունում գիտական, տնտեսական կամ սոցիալ-մշակութային նշանակություն ունեցող հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների ծրագիր:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ բուհերի և կազմակերպությունների դոկտորանտուրա են ընդունվում միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա և (կամ) սեփական նախաձեռնությամբ:

Դոկտորանտուրա ընդունվելու համար դիմումները տրվում են համալսարանի ղեկավարի անունով, կցելով համապատասխան փաստաթղթեր.

ա) Գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաև ԲՈՅ-ի կողմից տրված համապատասխանեցման վկայագիրը):

բ) Դոկտորական ատենախոսության ծավալուն պլանը:

գ) Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3X4 չափսի):

դ) Հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:

Անձնագիրը և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագիրը ընդունվողը ներկայացնում է անձամբ:

Դոկտորանտներին վճարվում է պետական կրթաթոշակ և ամեն տարի տրամադրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ: Համալսարանի ղեկավարն արտաբյուջետային միջոցների հաշվին կարող է սահմանել դոկտորանտների կրթաթոշակին հավելավճար:

Դոկտորական ատենախոսություն ինքնուրույն պատրաստող գիտությունների թեկնածուների ատենախոսության թեման հաստատվում է ԲՈՅ-ի կողմից՝ հաստատված կարգին համապատասխան:

### Հայցորդություն

Թեկնածուական ատենախոսության վրա ինքնուրույն աշխատող հայցորդներ կարող են լինել բարձրագույն կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձինք:

Որակավորման քննություններ հանձնելու և ատենախոսությունն ավարտելու համար հայցորդներին հատկացվող առավելագույն ժամկետը 3 տարի է:

Հայցորդի կարգավիճակով լրիվ ժամկետ անցած անձինք երկրորդ անգամ չեն կարող օգտվել նույն մասնագիտությամբ հայցորդ ձևակերպվելու իրավունքից:

Հայցորդները տարեկան մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում, որի հիման վրա ատեստավորվում են համալսարանի ամբիոնի կողմից: Ատեստավորումը չանցած հայցորդները ենթակա են ազատման:

Հայցորդները համալսարանում անվճար օգտվում են գիտական սարքավորումներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից:

Հայցորդները համալսարանում հանձնում են որակավորման քննություններ՝ ԲՈՅ-ի և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգին համապատասխան:

Հայցորդությունը համալսարանում իրականացվում է վճարովի հիմունքներով, կրեդիտային համակարգով:

Ուսման վարձը տարեկան կազմում է 480000 դրամ:

Հայցորդություն ձևակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.

ա) Դիմում՝ ՀՊՏՀ ռեկտորի անունով

բ) Բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

գ) Հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքի մասին հաշվետվությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ:

դ) Որակավորման քննությունների հանձնման մասին վկայական (եթե դրանք հանձնված են):

ե) Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և 1 լուսանկար (3x4 չափսի):

զ) Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Ընդունվողն անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմը ներկայացնում է անձամբ: